# Արձանագրություն N 3

**«ՍՄ-ԳՀԱՊՁԲ-2019/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի**

ք. Կապան

«09» ապրիլ 2019թ.
ժամը 12·00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Ս Աղաբեկյան
հանձնաժողովի անդամներ՝ Ս. Թումանյան, Գ. Սարգսյան, Մ. Աբգարյան, Ն. Աթայան
հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գրիգորյան

**<u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին</u>**

1 Ընդունել ի գիտություն

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04 05 2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Մաքս օիլ»ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի

1 1 Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին տրամադրել է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը

1 2. Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :**

2. **<u>Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>**

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄ-ԳՀԱՊՁԲ-2019/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և «Մաքս օիլ»ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :**

**<u>3 «ՍՄ-ԳՀԱՊՁԲ-2019/2» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին</u>**

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2 րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6 րդ կետը՝ «ՍՄ-ԳՀԱՊՁԲ-2019/2» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարվում «Մաքս օիլ»ՍՊԸ-ն.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :**

## 4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3 րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «Մաքս օիլ»ՍՊԸ ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ.

4 2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :**

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ Աղաբեկյան

Անդամ՝ ---------- Ս․Թումանյան

---------- Գ․Սարգսյան

---------- Մ․Արզարյան

---------- Ն․Աթայան

Քարտուղար՝ ---------- Ս․ Գրիգորյան